Մ. ՔԵՄԱԼԻ ՄԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ

Ամերիկյան «Los Angeles Examiner» օրաթերթը 1926 թ. օգոստոսի 1-ի համարում «Քեմալը խոստանում է ավելի շատ կախաղան հանել իր քաղաքական հակառակորդներին Թուրքիայում» խորագրի տակ զետեղել էր Թուրքական հանրապետության նախագահ Մուստաֆա Քեմալ-փաշայի (Աթաթյուրք) հարցազրույցը շվեյցարական լրագրող Էմիլ Հիլդերբրանդի հետ։

Հիշյալ հարցազրույցում, որը տեղի էր ունեցել Անկարայում նույն թվականի հունիսի 22-ին, Մ. Քեմալը անդրադառնալով իր դեմ կատարած մահափորձին, ասել էր հետևյալը. «Երբ մենք հաղթեցինք մեր արտաքին թշնամիներին, կամ այն թշնամիներին, որոնք որոշակիորեն համակրանք էին տածում օտարերկրյա ինտրիգանների հանդեպ, մեր ազգաբնակչության գրեթե բոլոր դասակարգերն ու խավերը խանդավառությամբ և նույնիսկ մոլեռանդությամբ համախմբվեցին՝ փրկելու համար ազգը օտարերկրյա լծից։ Բայց հազիվ էր ազգը իր ով լինելը ապացուցել օտարերկրյա զրպարտիչներին, երբ որոշակի տարրեր, որոնք սնվել էին քաղաքական ինտրիգների հին դպրոցից, սկսեցին ցույց տալ իրենց մագիները։ Մենք կանգնած էինք հանրապետության կյանքին սպառնացող երկու տարրերի դեմ-հանդիման։ Մեկը դա այն խումբն էր, որը կրոնական մոլեռանդությունն ու տգիտությունը զուգակցում էր քաղաքական անմտության հետ, և որն անցյալում, տարբեր սուլթանների իշխանության ներքո, փորձում էր հավատացնել, թե պետությունը մի օրգանիզմ է, որը կարելի է շահագործել անառակության ու անսքող կաշառակերության միջոցով՝ իրենց անձնական նպատակների համար։

Ես վերջ դրեցի կառավարման այդ շարագուշակ ու դատապարտելի տեսությանը՝ վերացնելով Խալիֆին ու Սուլթանին։ Ես աքսորեցի այն անձանց, ովքեր մարմնավորում էին այդ տեսությունը...»։

«Երկրորդ տարրը,— շարունակում է Մ. Քեմալը,— որի դեմ ես անխնա պայքար եմ մղում, դա մարդկանց այն խումբն է, որը նախահանրապետական շրջանում աշխարհին հայտնի էր Երիտասարդ Թուրքերի միության կոմիտե անվան տակ։ Այդ տարրերի շարքերը հավաքագրված էին քաղաքական բախտախնդիրների կասկածելի նմուշներից, կիսագրագետ առաջադիմականներից և սանձարձակ սովորույթների տեր մարդկանցից։ Այն օրերին, երբ մենք պայքարում էինք մեր հակառակորդների դեմ՝ ներսից մինչև դուրս, այս տարրերը մեզ միացան և կովեցին մեր շարքերում։ Չնայած դրան, ես առաջին իսկ օրից հավատ չունեի նրանց մղումների հանդեպ։ Սակայն ես ցանկանում, հույս էի տածում և աղոթում, որ երբ մեր երկիրը ազատվի օտար լծից, այս տարրը ուղղի իր մեթոդները՝ ներշնչվելով հայրենասիրական զգացումներով։ Շուտով ես համոզվեցի, սակայն, որ իմ հույսերը դատապարտված էին հիասթափության, և որ իմ մաղթանները մնացին անպատասխան։ Ես համբերությամբ սպասում էի, աչքս չհեռացնելով նրանց գործունեությունից»։

Այնուհետև Քեմալը ասում է, որ երբ այդ ուժերը ձևավորվեցին որպես քաղաքական ընդդիմադիր կողմ, ինքը, «չհավակնելով լինել դիկտատոր», հակված էր հանդուրժելու նրանց, բայց երբ նրանք քաղաքական ընդդիմադրության քողի տակ սկսեցին խռովություններ կազմակերպել, «կառավարման մեքենայի ղեկի մոտ կանգնած անձանց սրբազան պարտականությունը դարձավ ճնշել նրանց և ճնշել օրինակելի դաժանությամբ...»։

Անդրադառնալով այնուհետև իր հակառակորդների անցյալի գործունեությանը, Մ. Քեմալը իր հարցազրույցում մատնանշում է. «Նախկին երիտթուրքական կուսակցության այդ մնացորդները, կուսակցություն, որը պետք է պատասխան տար մեր միլիոնավոր քրիստոնյա հպատակների կյանքի համար, որոնք անգրագետ էին զանգվածաբար իրենց բնակավայրերից և ոչնչացվեցին՝ այդ մնացորդները շարունակում էին համառել հանրապետական կառավարման օրոք (ընդգծումը իմն է—Ռ. Ս.)։ Նրանք մինչև օրս էլ շարունակում էին ապրել կողոպուտի, թալանի ու կաշառակերության միջոցով, թշնամաբար վերաբերվելով օգտակար աշխատանքի մեջ ներգրավվելու և իրենց ապրուստը արդար քրտինքով վաստակելու ամեն մի գաղափարի։

Ընդդիմադիր կուսակցության քողի տակ, այս տարրը, որը ժողովրդի կամքին հակառակ երկիրը ներքաշեց Մեծ պատերազմի (առաջին համաշխարհային պատերազմի—Ռ. Ս.) մեջ և պատճառ դարձավ, որ Թուրք երիտասարդության արյան գետեր հոսեն՝ Էնվեր փաշայի հանցավոր փառասիրությանը հագուրդ տալու համար, այդ տարրը փոքրոգի եղանակով փորձեր կատարեց իմ, ինչպես և իմ կառավարության անդամների կյանքի դեմ»։

Որպես օրինակ Մ. Քեմալն իր հարցազրույցում մատնանշում էր 1926 թ. հունիսի կեսերին Իզմիրում իր դեմ ձեռնարկված մահափորձ, որը ձախողվեց, իսկ այդ մահափորձին ուղղակի կամ անուղղակի մասնակցած նախկին երիտթուրքական գործիչները դատապարտվեցին մահվան՝ կախաղանի միջոցով։ Դրանց շարքում էր իթթիհատական կուսակցության գաղափարախոս դոկ-

տոր Նազրմը, որը Կ. Պոլսի ռազմական ատյանի կողմից 1919 թ. հուլիսի 6-ին կայացված դատավճռով, ի թիվս երիտթուրքական մյուս հանցագործների, հեռակա կարգով դատապարտվել էր մահվան։ Եվ եթե ժողովրդական վրիժառուները ի կատար ածեցին արդար դատավճիռը Թալաաթի, Ջեմալի, Սաիդ Հալիմ-փաշայի, Բեհաեդդին Շաքիրի, Տրապիզոնի հայերի դահիճ Ջեմալ-Ազմի-բեյի նկատմամբ, ապա դոկտոր Նազրմին հաջողվեց խույս տալ դատաստանից և նա 1923 թ. Բեռլինից վերադարձավ Թուրքիա։ Այստեղ նա հարեց Մուստաֆա Քեմալին ընդդիմադիր քաղաքական խմբավորմանը և մասնակցություն ունեցավ վերը նշված դավադրությանը՝ կախաղան բարձրանալով Մ. Քեմալի ձեռքով։

Երիտասարդ թուրքերի կուսակցության ու կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության և, մասնավորապես, Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ նրանց կիրառած ջարդարարական քաղաքականության դատապարտումը Մ. Քեմալի կողմից ուշադրության արժանի է որպես պատմական փաստ։ Միաժամանակ այն խիստ այժմեական է, եթե նկատի ունենանք, որ իր իսկ Քեմալի հիմնադրած Թուրքիայի պատմության ընկերությունը (Turk Tarih Kurumu) և ժամանակակից թուրք պատմագրությունը ամբողջությամբ վերցրած, շարամտորեն կեղծում են պատմական իրականությունը՝ փորձելով ժխտել կամ այս կամ այն ձևով արդարացնել թուրքատպատակ ժողովուրդների դեմ գործադրված թուրքական ազգայնամոլ քաղաքականությունը, մասնավորապես հայկական եղեռնը։

Պետք է մատնանշել, սակայն, որ Մ. Քեմալի՝ ըստ էության իրականությանը համապատասխանող այս գնահատականը չէր բխում ազգային հարցում նրա սկզբունքային դիրքորոշումից, քանի որ ինքը՝ Մ. Քեմալը ինչպես մինչև նշված հարցադրույցը, այնպես էլ դրանից հետո կիրառում էր ազգայնամոլ քաղաքականություն ընդհանրապես Թուրքիայի այլազգի ժողովուրդների նկատմամբ։

Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ОБ ОДНОМ АРХИТЕКТУРНОМ ПАМЯТНИКЕ АРМЯНСКОЙ КОЛОНИИ МОСКВЫ

В немногочисленных публикациях по истории армянской колонии Москвы мы не сможем найти точные сведения о численности армянского населения, месте расселения армян, роде их занятий. Не очень много найдем материалов и о памятниках архитектуры, связанных с историей колонии. Между тем важным ориентиром для воссоздания истории возникновения, развития колонии, изучения демографических и социальных изменений в ней могут служить церковно-приходские книги, куда записывались пофамильно все члены прихода, акты крещения, бракосочетания, смерти. Обычно при церквах создавались школы, приюты, богадельни. В церковных документах фиксировались взносы прихожан, денежные и вещественные дары, рукописи, книги, церковная утварь и т. п. Зачастую именно церковь выступала в роли той инстанции, с которой вела переговоры по общим для всей колонии вопросам светская власть.

Место расположения храмовых сооружений на территории города, количество церквей, их размеры, состояние, внутреннее убранство свидетельствуют подчас о благосостоянии прихожан, об отношении власти к колонии. Вероятно, будет правильным утверждать, что именно церковных сооружений должно было относительно больше (по сравнению со светскими) сохраниться. Посягательства на церковь рассматривались как преследование всех прихожан всей общины колонии. Вспомним, что дореволюционное законодательство чаще оперировало понятием вероисповедания, нежели национальности (служебные формуляры и анкеты не знали термина «национальность»).

Покойный академик АН АрмССР Л. С. Хачикян в одной из своих последних публикаций утверждал, что «у армян в Москве была церковь еще с конца XIV в.»[1] Автор делает в связи с этим логически оправданный вывод: «следовательно, организованная армянская колония в Москве существовала гораздо раньше, чем было принято считать»[2]. Как видим, фиксация наличия храма—важный довод для утверждения о существовании постоянной

1 Լ. Ս. Խաչիկյան. Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա.— «Բանբեր Մատենադարանի», № 13, Երևան, 1980, էջ 106 (русское резюме).

2 Там же.